



# Ավետիք Իսահակյան

## Ծառա Սիմոն

Վաղուց անցած-գնացած օրերից է այս վերհիշումը:

Իմ բարեկամ մի ընտանիք Սիմոն անունով մի սպասավոր ուներ: Սիմոնը տարիներից ի վեր ծառայում էր նրանց մոտ. գոհ էին նրա աշխատանքից և թվում էր, որ ինքն էլ գոհ էր նրանցից:

Մի օր Սիմոնը ներկայանում է տանտիրուհուն և ասում.

Խանում, ներող եղեք, ես ուզում եմ տուն գնամ, մեր գեղը: Շատ շնորհակալ եմ ձեզանից, բայց էլ չեմ ուզում ծառայել:

Ինչո՞ւ, Սիմոն ջան,— զարմացած հարցնում է տիկինը, չէ՞ որ մենք քեզ միշտ լավ ենք նայել, տարիներ շարունակ մեր տանն ես եղել, սովորել ենք իրար: Հիմա ի՞նչ պատահեց, ասա սրտաբաց: Թե ոռճիկդ քիչ ես գտնում՝ ավելացնենք: Էնպես լինի, որ գոհ լինես մեզնից և մեր տանը մնաս:

Չէ՛, խանում ջան, գիտեմ, որ ինձ հետ լավ եք վարվել, և ոռճիկիս մասին էլ գանգատ չունեմ, միայն թե ուզում եմ գեղ գնամ, ժամանակավոր. կարելի է մի քանի ամիս անց էլի ետ գամ:

Բայց ինչո՞ւ ես մնում այդքան երկար ժամանակ, գեղում ի՞նչ կա որ... Սիմոնը լռում է:

Մեկ էլ որ՝ չասացիր գնալուդ պատճառը:

Խանում ջան, ճշմարիտը որ կուգես իմանալ՝ ասեմ, վճռողական շեշտով պատասխանում է Սիմոնը, —ուզում եմ գնալ, որ էլ իմ անունը չլսեմ: Չլսեմ անունս՝ ականջս հանգստանա: Թե չէ, ես ինչ կյանք է, ես կխելոնեմ: Շարունակ, ամեն օր Սիմոն, սամավարը քցե, շո՛ւտ, շո՛ւտ արա: Սամավարը քցում եմ, կրակը փչում եմ, մեկ էլ Սիմոն՝, աղայի կոշիկները արի տար, շուտ սրբիր՝ բեր: Վազում եմ, կոշիկները տանում, սրբում եմ շտապով, հանկարծ՝ Սիմոն՝ վազե

Ֆայտոն բեր, օրիորդը տեղ է գրնում, շո'ւտ, շո'ւտ: Վագում են ֆայտոն բերելու՝ սամավարը թողնելով իր բախտին, կոշիկները սրբելը կհաստ, ֆայտոնը բերում են: Սամավարը եփել, ջուրը թափվել է. նորից ջուր են լցնում, նորից ածուխ են քցում: Մեկ՝ սամավարն են փրչան, մեկ՝ կոշիկները սրբում:

Նորից անունս.

Տո՛ւ տղա Սիմոն, չայն ո՞ւր մնաց, բերաններս չորացավ: Դեհ, գնա մի լիմոն էլ բեր, միայն շո'ւտ արա:

Մյուս կողմից աղայիս ձայնը.

Տո՛, Սիմոն, կոշիկ սրբե՞լ էր, թե սենյակ սրբել: Մի ժամ եղավ: Շտապում են, շո'ւտ արա:

Ձեռքս կոշիկի միջից չհանած՝ դռան գանգը տալիս են:

Սիմոն՛, վագի՛ր, դուրը բաց, էդ միջոցին, մեկ էլ պստիկ տղան. Սիմոն, թո՛ի մի տուփ պապիրոս բեր: Դե՛հ, քեզ տեսնեն... Դեհ, խանում ջան, բա ես ո՞նց անեն, որ չխեղեն: Օրը հազար անգամ անունս լսում են.

- Սիմոն՛, արի,

Սիմոն՛, գնա,

Սիմոն՛, տար,

Սիմոն՛, բեր,

Սիմոն՛, վագե,

Սիմոն՛, թո՛իր,

Սիմոն՛, Սիմոն՛,

Էլի

Սիմոն՛, Սիմոն՛...

Էդ՝ ականջս խարտոցող Սիմոն անունը երագիս մեջ էլ են լսում, քունս հարամ է անում:

Տունը մարդ չեղած ժամանակ էլ պատերը ձեն են տալիս.

-Սիմոն՛, Սիմոն՛:

Անունս ինձ թշնամի է դառել, աչքիս գրողն է դառել.

կատաղեցնում է ինձ, գժվեցնում է ինձ: Կուգեն փախչեն աշխարհի ծայրը, որ զգվելի անունս էլ չլսեն:

Չէ՛, խանում ջան, էլ ուժ չունեն, հիմի շատ են խնդրում իրավունք տաս, երթամ մեր գեղը, մի քանի ամիս ականջս հանգստանա, հետո նորից կգամ: Խոսք են տալիս, միամիտ եղեք...

